ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 1891
27 MAY 2021
Կից ☐ Նշում

«27» մայիս 2021թ. No 2021 - Ա

ՍԼՈՎԵՆԻԱՅԻ «ԼԵԿ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ Դ.Դ., ՎԵՐՈՎՍԿՈՎԱ Փ. 57, 1526 ԼՅՈՒԲԼՅԱՆԱ-ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂ (ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ), ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՀՍԿՈՂ, ԼԵԿ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ Դ.Դ., ԿՈԼՈԴՎՈՐՍԿԱ Փ. 27, ՄԵՆԳԵՍ, 1234, ՍԼՈՎԵՆԻԱ-ԲԱԼՔ ԱՐՏԱԴՐՈՂ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՂ, ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂ (ՖԻԶԻԿՈՔԻՄԻԱԿԱՆ)՝ ԼԵԿ ՖԱՐՄԱՍՅՈՒԹԻՔԱԼՍ Դ.Դ., ՎԵՐՈՎՍԿՈՎԱ Փ. 57, 1526 ԼՅՈՒԲԼՅԱՆԱ,(ՍԼՈՎԵՆԻԱ)-Ի ՀԱՄԱՐ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «5-ՆՕԿ (ՆԻՏՐՕՔՍՈԼԻՆ), ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ, 50ՄԳ; (50) ՊԼԱՍՏԻԿԵ ՏԱՐԱՅՈՒՄ» ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ մասի 1-ին կետը, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ՀՀ կառավարության 28.02.2019 թվականի թիվ 162-Ն որոշման Հավելված 1-ի 7-րդ, 58-րդ, 59-րդ կետերը, ՀՀ կառավարության 28.02.2019 թվականի թիվ 164-Ն որոշման 35-րդ կետը, , Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2021 թվականի մայիսի 25-ի թիվ 18976 անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը, դեղն արտադրող դեղագործական ընկերության կողմից ներկայացված գրությունն առ այն, որ սերիաների ընթացիկ կայունության փորձաքննության արդյունքում ի հայտ է բերվել

Հանձն. 27.05.21 ժ. 15⁰⁰

որակի անհամապատասխանություն, մասնավորապես թույլատրելի սահմաններից դուրս 5,7-դինիտրոքվինոլին-8-օլ-ի խառնուրդի առկայություն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Սլովենիայի «Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա-որակի հսկող (մանրէաբանական), բաց թողնման հսկող, Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Կոլոդվորսկա փ. 27, Մենգես, 1234, Սլովենիա-բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող (ֆիզիկոքիմիական)՝ Լեկ Ֆարմասյութիքալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա,(Սլովենիա)-ի համար» դեղագործական ընկերության արտադրության « 5-ՆՕԿ (նիտրոքսոլին), դեղահատեր թաղանթապատ, 50մգ; (50) պլաստիկե տարայում» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տրամադրումը ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին, գրանցման հավաստագրի իրավատիրոջը, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին, դեղերի շրջանառության սուբյեկտներին:

4. ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրիելյանին՝ Սլովենիայի «Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա-որակի հսկող (մանրէաբանական), բաց թողնման հսկող, Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Կոլոդվորսկա փ. 27, Մենգես, 1234, Սլովենիա-բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող (ֆիզիկոքիմիական)՝ Լեկ Ֆարմասյութիքալս դ.դ.,

Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա,(Սլովենիա)-ի համար» դեղագործական ընկերության արտադրության «5-ՆՕԿ (նիտրոքսոլին), դեղահատեր թաղանթապատ, 50մգ; (50) պլաստիկե տարայում» դեղը հանել գրանցամատյանից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

27.05.2021

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157